№ 108 ՈՒՐԲԱԹ ՄԱՅԻՍԻ 23 **1903** ՈՒՐԲԱԹ ՄԱՅԻՍԻ 23 № 108

ԵՐԵՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ ազն օրերից).

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր առղաւեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական տեսութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Եղը դմակին են քսում. Նամակ Կարսից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլի բանկէտը Պարիզում. Կ. Պոլսի լրագիրներից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հայ կեանքէն։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

Ի՞նչ արդիւնք ցոյց կը տայ Բոլգարիայի նոր մինիստրութիւնը։ Արդեօք նա կը հետեւէ իր նախորդների քաղաքականութեան, թէ կը մտցնէ որ և է փոփոխութիւն իր գործողութիւնների մէջ։ Ահա այն հարցերը, որոնք հանդէս են դրված քաղաքական մամուլի էջերում։

Այն մինիստրութիւնը, որ հրաժարական տուեց, այն է Դանեվի մինիստրութիւնը, համարվում է ռուսասիրական, իսկ ներկայ մինիստրութեան մէջ ազդեցիկ դեր են կատարում Ստամբուլովեան և աւստրիասիրական տարրերը։ Սակայն արտաքին քաղաքականութեան ծրագիրը մնացել է նախկինը և Բոլգարիան առաջվայ պէս աշխատում է հանգստացնել մտքերը թէ Մակեդոնիայում և թէ Բոլգարիայում։ Մինիստրութեան ընդհանուր պատկերը նրա համակրութիւնների վերաբերութեամբ ենթարկվել է փոփոխութեան, իսկ նրա գործավարութիւնը, նրա գործնական քայլերի բնաւորութիւնը մնացել են նախկինը։ Նոր մինիստրութիւնը շտապեց յայտնել թէ Թիւրքիային և թէ Ռուսասանին ու Աւստրիային, որ նա կը հետեւէ խաղաղացնող քաղաքականութեան և կաշխատէ այդ պետութիւնների հետ միասին հանգստացնել յուզված մտքերը Մակեդոնիայում՝ սակայն մի պայմանով, որ բարենորոգումների ներմուծումը սկսէ շուտով իրագործվել։

Ի միջի այլոց՝ պէտք է ուշադրութիւն դարձնել հետեւեալ հանգամանքի վրա։ Մի քանի ամիս առաջ, երբ Մակեդոնիայում նոր էին սկսվել յուզմունքները և շարժումները, այն ժամանակ սպառնալիքներ էին լսվում բոլգարների կողմից, թէ նրանք կը բաբանցնեն դրօշակ և՝ միացած մակեդոնացիների հետ՝ կռիւ կը մղեն Թիւրքիայի դէմ։ Իսկ այժմ հանգամանքները փոխվել են։ Այժմ սպառնալիքները բոլգարների կողմից չեն, այլ Թիւրքերի կողմից։ Այժմ Թիւրքերը աւելի ձեռնտու են համարում պատերազմ անել, քան երկար բարակ հոգսեր անել սրան ու նրան հանգստացնելու և բէֆորմներ մտցնելու համար։ Անկասկած՝ Թիւրքիան երբէք չի վստահանայ պատերազմ յայտնելու և նա երկիւղ կը կրէ, որ Եւրոպան կարող է և միջամտել նրա գործերի մէջ, սակայն ներկայ դէպքում կարեւոր է և այն, որ Թիւրքիան իրան այնքան ուժեղ և խիզախ է զգում, որ կարողանում է խրոխտանալ և սպառնական դիրք ընդունել։

Արդարև մի քանի ամիս սրանից առաջ, երբ Թիւրքիան բաւականաչափ զօրք չունէր Բալկանեան թերակղզում և կարող էր նոյն իսկ լուրջ պարտութիւններ կրել ապստամբական բեմի վրա, նա այն ժամանակ չէր կարող համարձակ լեզուով խօսել։ Իսկ այժմ նա ունի եւրոպական հողի վրա քառորդ միլիոնի չափ զինուորութիւն, որի ոյժով նա կարող է համարձակ կերպով պատերազմի դաշտ դուրս գալ Բոլգարիայի և Սերբիայի նման փոքրիկ պետութիւնների դէմ։

Քաղաքական շրջաններում կարծում են, որ պատերազմի երկիւղը պէտք է համարել բոլորովին արդէն վերացած։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ԵՂԸ ԴՄԱԿՆ ԵՆ ՔՍՈՒՄ»

—

Լրագիրներից իմացանք, որ յայտնի դրամատէր պ. Մ. Արամեանց նուիրել է Թիֆլիս քաղաքին 100,000 ռ., որպէս զի այդ գումարով մի նոր հիւանդանոց բացվի Կովկասի գլխաւոր կենտրոնում։ Այդ գործը բարի գործ է, բայց նա կամ նրա նման մի ուրիշը անհամեմատ աւելի արժանի կը լինէր գովասանքի, դրուատման, աւելի, այոպէս ասած, ատաուածահաճոյ կը լինէր, եթէ գոյութիւն ստանար մեր գաւառների խորքերում, կորած-մոլորված որ և է գիւղական կենտրոնում։

Բայց այդ գործը, Արամեանցի նուիրատուութիւնը, աւելի լաւ, ուղղակի վեհ կարող էր համարվել, եթէ նախագծվէր այնպիսի տեղերի համար, որտեղ գիւղական վայրագ գղիրը ներքին հիւանդութիւնների բժշկի դեր է կատարում, դայլաքը խիրուրգի, նախրչին մանկաբարձի, իսկ գրբացը ջղային ու հոգեկան հիւանդութիւնների...

Ժողովրդական առածն ասում է՝ «Եղը դմակն են քսում», այսինքն առանց այն էլ իւղառատ, համարեա ամբողջովին իւղից բաղկացած, դմակը օծում, ծածկում են իւղով նրան աւելի փայլ տալու ու այդպիսով աւելի դրաւիչ դարձնելու գնողների համար։ Մեր հարուստները, ամենչան բացառութեամբ, բարեգործութիւն անելով, իսկապէս «Եղը դմակն են քսում», այսինքն մոռացութեան են տալիս ժողովրդի աւելի էական, աւելի աղաղակող կարիքները, իրանցից հեռու տեղերի պէտքերը ու ընկնում են այնպիսի բաների ետեւից, որոնք աւելի մօտ են իրանց, աւելի տեսանելի ու չչափելի են իրանց համար ու այդպիսով կարող են յագուրդ տալ անյագ մնափառութեան...

Թիֆլիսում կան կարիքներ, մեծ կարիքներ. ժողովրդի չունևոր, ստորին խաւերը Թիֆլիսում մեծ դժուարութիւններով են ստանում բժշկական օգնութիւն, բայց էլի ստանում են. Թիֆլիսում կան հիւանդանոցներ, կան բազմաթիւ բժիշկներ. վերջիններիս մէջ, բացի անպայման մամոնային, սատանային, ծառայողներից, կան նաև քիչ-շատ գաղափարին, Աստուծուն, ծառայողներ, որոնցից Թիֆլիսի չունևորը, աղքատը օգնութիւն կարող է ստանալ. Թիֆլիսն ինքը հարուստ քաղաք է, իր միջոցներով էլ տարէցտարի կարող է ընդարձակել բժշկական օգնութեան գործն իր մէջ, ինչպէս և իրագործել այլ հանրօգուտ ձեռնարկութիւններ. գաւառացին, խղճուկ գիւղացին իսպառ զուրկ է բժշկական օգնութիւնից. նա ոչ միայն ձրի, այլ փողով էլ չէ կարողանում ստանալ բժշկական օգնութիւն, քանի որ գիւղերում բժիշկներ չը կան։ Գաւառական ու գիւղական բժիշկները, որոնցից ամբողջ գաւառում լինում է մի կամ ամենաշատը երկու հատ, բժիշկներ չեն մեծ մասամբ, այլ որոշ պաշտօնական գործեր կատարող չինովնիկներ, իսկական բժշկականութեան հետ ամենևին առնչութիւն կորցրած. նրանց ծառայութեան շրջանը, բայցը, այնքան մեծ է ու պաշտօնական գրութիւնները այնքան շատ, որ հազիւ են կարողանում այդ թղթերը գրել ու ստորագրել։ Ամենագաղափարական բժիշկն անգամ կարող է ընկնել, իբրև բժիշկ, այդ պայմանների մէջ ու չը ծառայել իր կոչման։

Պ. Արամեանցի արած բարեգործութիւնը համակրելի գործ է ինքն ըստ ինքեան, բայց նա էլի որոշ չափով «Եղը դմակ քսելը» է. Թիֆլիսը, հաւեմատած Նոր-Բայազէթի, Սուրմալուի, Դանձակի, Աբարանի, Շիրակի, Ախալքալաքի, Զանգեզուրի, Ջիվանշիրի ու մեր այլ գաւառների գիւղական մարդաշատ կենտրոնների հետ, որտեղ որ և է հինաւուրց Յովհաննէս հայր սուրբ լուսակի արմատից ու սխտորկխտորից պատրաստած իր «համնայն ցաւոց» անուն կրող, իր «ունիվերսալ» դեղով պրոֆէսոր Կօխի դեր է խաղում ու իր տգիտութեան անթիւ զոհեր առաքում հեռաւոր երանելի աշխարհը, շատ ու շատ երջանիկ է թէ բժշկական օգնութեան և թէ հասարակական բարօրութեանը նպաստող այլ պայմանների տեսակէտից։ Մենք բնաւ չենք ուզում նսեմացնել պ. Արամեանցի նախագծած համակրելի գործը. ուրախ կը լինենք, եթէ նա գոյութիւն ստանայ ու ծաղկի. բայց աւելի ուրախ կը լինենք, կը հրճվենք անչափ, երբ նոյնանման գործեր տեսնենք մի օր իրագործված մշտական, անվերջ «ախ ու օխի», «չոռ ու ցաւի», «դարդի, նաչարութեան» մռայլ աշխարհում, մեր գիւղական շրջաններում։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՑ ԿԵԱՆՔԷՆ

(Շարունակութիւն)

Վենետիկ, մայիսի 12-ին

Բայց ինչու՞ Պոլսոյ մէջ, Սահմանադրութեան հիմնարկութենէն յետոյ, կարելի չեղաւ լուրջ և տևական կուսակցութիւններ կազմել, երբ հանրային կեանքի համար մեծ ասպարէզ բաց կար։ Այս հարցումին պատասխանը քանի մը տողով չէ, որ պիտի տրուի։ Բացատրութիւնը մեր մտաւորական ու հոգեբանական կեանքին պատմութեանը մէջ պէտք է փնտռել։ Բայց երկու բառով պարզ կարծիք մը կրնանք յայտնել։

Կովկասի մէջ մշակական կուսակցութիւն մը ստեղծուեցաւ ու կը տեւէ, վասն զի կուսակցական չենք մը կառուցանելու համար, հանրային կեանքի հողին մէջ նախ հիմնաքարեր դրուեցան։ Արծրունին գաղափարներ ունեցաւ, զանոնք «Մշակ»-ին իբր հիմ զետեղեց, և կուսակցութիւնը հետզհետէ անոր վրա բարձրացաւ։ Իսկ Պոլիս ուզեցին չենք մը բարձրացնել, օրինակ՝ յառաջադիմական կուսակցութիւնը՝ առանց նախապէս հիմ մը ձգելու։

Եւ սակայն եկաւ օր մը, որ Թիւրքիոյ մէջ ալ կուսակցութիւն մը սկսաւ հիմնուիլ յար և նման մշակականութեան, որուն ալ դաշնակիցն էր։ Փոթորկին առաջին պայթումներէն եկաւ էր, 1891-ին, որ Շահնազար «Հայրենիք»-ը հիմնարկեց։ Ու ահա կազմուեցաւ Հայրենիքեան կուսակցութիւն մը, որ ոչ պետունէր, ոչ վարչական մարմին, ոչ կազմակերպութիւն, ոչ կանոնագիր։ Գաղափարն էր որ ինչպէս Թիֆլիս «Մշակ»-ով, նոյն և Պոլիս «Հայրենիք»-ով իբր կենդրօնաձիգ զօրութիւն մը ժողովուրդը իրեն կը քաշէր։ Փոթորիկները փոթորիկներու յաջորդեցին եւ ...

...երևցածներն ալ իրենց «չէզոքութեան» դաւանանքն ընելու են։ Արտասահման ձրիաբաշխ թերթերէ, ու վանական պարբերականներէ դուրս, ունինք բաժանորդագրութեամբ հրատարակուող տասնեակը մանր ու մեծ թերթեր։ Առնցմէ երեքը միայն կուսակցական կը ներկայանան, իսկ տասնվեցը՝ ոչ-կուսակցական։ Ի՞նչ աւելի պերճախօս ապացոյց թէ հանրային կարծիքը կուսակցութենէ կը խորշի։

Պատճառը։ Պատճառը եթէ մէկ, երկուք, երեք ըլլար կը թուէինք։ Բայց «զոռն ասեմ, զոռն խոստովանիմ»։ Սաչափը կրնանք ըսել, թէ արտասահմանի հայն ալ ինքզինքը յոգնած կը զգայ, շատ յոգնած։

Դեռ շատ շուտ չէ հանգստի պէտք զգալնիս։

—

Գրականութեան կարօտն ալ զոր կը քաշենք, մեր խոնջէնքը կը յայտնէ։ Արտասահմանեան թերթերը հետզհետէ կը գրականանան։ Ի՞նչ ընեն. ժողովուրդը հրճուանք կուզէ։ Տընտեսագիտութեան «ինդրանքի և մատուցումի» օրէնքը կը ստուգուի և այս պարագային մէջ ալ։

Գրականութեան որքան որ ալ ջերմ սիրող մը ըլլամ, բայց և այնպէս խոստովանիմ, որ այս գրասիրական տենչանքը, յար և նման կուսակցական ոգիին տկարացմանը, բարեգուշակ չեմ համարիր։ Հայեցողական կեանքով ապրելու կը պատրաստուինք, այսինքն՝ հանդերձեալ կեանքի։

Քրոնիկագրին գործը երևոյթները դիտելէն անդին չանցնիր։ Առանց պատասխանատուութեան օրացոյց մը, ջերմաչափ մըն է։ Ցոյց կուտանք ու կանցնինք։

«Հայաթերթը» քաղաքական—գրականութեան բաժին մը կը հանէ իր Կիլիկեան կեանքի վէպովը։ Իսկ «Ազատ Բեմը» զուտ ընտանեկան բարքերու վէպով մը հանդերձ, շատ գրական կը ներկայանայ։ Հին ժամադիր է Անցորդը, գեղգեցիկ նուրբ գրագէտ մը, որուն ոճէն համառնելու համար պէտք է նախապէս գրական բաւական լաւ դաստիարակութիւն ստացած ըլլալ։ Հին պիտի երևի Միհրան Թէլեան, Իզմիրլեան, պատրիարքին սիրելի ու վստահելի քարտուղարը, որ Գրիւսելէն փաստաբանական վկայականը առած Աղէքսանդրիա կը գտնուի։ Հայ ընկերաբանական տեսութիւններ պիտի պարզէ։ Այս նորութիւնը մեզի չափազանցօրէն կը շահագրգռէ։ Մենք զմեզ ընկերաբանական գիտութեանց մէթօտներովը քննելու շարժումին մէջ ոչ շատ ոչ քիչ առաջ գացած ենք։ Հանրմեան բանաստեղծը մեզի տուիթ մը պիտի տայ ձեզի նոր տաղանդ մը ծանօթացնելու։ Ու Միքայէլ Կիւրճեան, գրեթէ դեռ քսանամեակ, և արդէն վաղուց է հեղնաբանութեան ձիրքեր յայտնեց։ Միայն թէ փափագելի է, որ հեղնաբանութեան մեծ օրէնքին հպատակի—կարճ ու սուր։ Հայ օրագրողներուն Աստուծոյ առջև դատաստանը սրամիտ է, մանաւանդ անոնց համար, որ արտասահմանի գրողները կը ճանչնան. բայց եթէ կիսուակէս զեղջուէր, աւելի մեծ հաճոյք պիտի զգայինք։ Իր մէկ տողը, որ վերջին խօսքն է, ամբողջ յօդուածը կարժէ, վասն զի դիւտ մըն է. երկու երեք բառով, ամբողջ կացութիւն մը կը պարզէ։ Աստուած Տասնաբանեայն բարեփոխելով, անոր մէջ հայոց համար նոր պատուիրան մը պիտի աւելցնէ։ «Լրագիր չը պիտի հրատարակեա»։ Բարեբաղդաբար այս պատուիրանը դեռ չէ տրուած, ապա թէ ոչ «Ազատ Բեմ»-էն ալ պիտի զրկուէինք։

***

Պէտք է չփվել գիւղի հետ, պէտք է խորասուզվել գիւղական ժողովրդի խաւերը՝ տեսնելու համար, թէ ինչքան անյուսալի խեղճութիւն, ինչքան թշուառութիւն կայ այնտեղ անծայր. ժողովուրդը տանջվում է դրամի պակասութիւնից վաշխառուների ճանկերում, ժողովուրդը գիտութեան, կուլտուրայի բացակայութեան շնորհով տանջվում է տգիտութեան ճանկերում, ժողովուրդը բժշկական օգնութեան բացակայութեան շնորհով տանջվում, տառապում է հիւանդութիւններից, մեռնողների տոկոսը տարէցտարի մեծանում է, և նա, մոռացութեան մատնված ժողովուրդը, ոչ մի աղեից չէ ստանում մի էական օգնութիւն, նրա համար չեն հիմնվում հիւանդանոցներ, իրաւաբանական խորհրդատու ատեաններ, կրեդիտային, գիւղատնտեսական հիմնարկութիւններ, նրա համար քիչ մտածողներ ու գործողներ կան, անչափ քիչ։

Շատ անգամ է լրագրութեան մէջ գրվել բժշկական օգնութեան բացակայութեան մասին մեր գիւղերից ու դեռ շատ պէտք է գրվի, մինչև որ նրա, խեղճ գիւղի, ձայնը լսելի ու հասկանալի չը դառնայ մեր ունևոր դասակարգերի համար, մինչև որ հայ կրեսոսները հայ գիւղի վերաբերմամբ էլ չը կատարեն իրանց բարոյական պարտքը, նրան էլ չը նուիրեն հարիւր հազարներ, որոնք հարիւր հազարների արտասուք կը ցամաքացնեն, շատ հազարների կեանքեր կը փրկեն, առաջը կառնեն սիֆիլիսի, թոքախտի ու այլ վարակիչ հիւանդութիւնների տարածման մեր գիւղերում, որոնք քայքայվում են ոչ միայն նիւթապէս, մտաւորականապէս, այլ և ֆիզիքապէս, շնորհիւ օր օրի վրա անընդհատ ու անարգել տարածվող հիւանդութիւնների։ Աւելի ատուածահաճոյ գործ է Նոր-Բայազէթի, Ղազախի կամ Գանձակի գաւառի խորքերում բանալ մի հիւանդանոց, հիմնել էժան կրեդիտ (2—3%-ով) մատակարարող մի դրամական հաստատութիւն, քան հարիւր հազարներ մախել հոյակապ եկեղեցի կառուցանելու դատարկ անփառութեան համար այնպիսի մի տեղում, որտեղ ընդամենը չորս զոյգ ու մի կէնա հայ կայ, կամ տասնեակ ու հարիւր հազարներ տալ այնպիսի հաստատութիւնների, որոնք իրանք իրանց միջոցներով, իրանց անապատ եկամուտներով, իրանց հարուստ կալուածքների շնորհով կարող են մեծ աշողութեամբ պահպանել իրանց գոյութիւնը, վերաշինվել, բարեկարգվել ու բարեզարդվել ու ժողովրդի համար էլ շատ բարեկարգ ու բարեզարդ գործեր կատարել, եթէ միայն այն հաստատութիւնների ղեկավարներն ու նրանց ծառայողները, շատ չնչին բացառութեամբ, չը լինեն խիստ հմուտ «վասն չմիութեան և մասամբ նորին...» յայտնի տիեզերահռչակ գործում, եթէ չը լինեն նրանք անբարեխիղճ, անհոգ, ծոյլ, ձրիակեր, ապիկար, անպէտք ու անպիտան միանգամայն...

Վերջին տեսակի բարեգործութիւնը կատարեալ, անպայման աններելի, «Ծոր դմակ քսել է», ուստի հանրական շահերի, ժողովրդի էական պէտքերի ու անյետաձգելի պահանջների տեսակէտից եթէ նայենք նրա վրա, համարձակ կարող ենք ասել, որ նա ցանկալի արժէքը չունի...

Սա. Տէր-Աւետիքեան

Գանձակ

ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻՑ

Մայիսի 19-ին

«Հայրենական տուն» պիեսից յետոյ, ամսիս 17-ի համար տիկին Սիրանոյշը դրել էր «Մեդէան», որի աֆիշները արդէն մայիսի 14-ից ցրված էին։ Աֆիշներում կարդում ենք «ներկայացումը սկսվում է ուղիղ 8½ ժամին, բացի օրանից խնդրվում է երկրորդ զանգից յետոյ տեղերը գրաւել»։

Ժամի ուղիղ 8½-ն է. ժողովարանի դահլիճում, բացի մի 6—7 երիտասարդից, ուրիշ մարդ չէ երևում։ Դերասանները կազմ ու պատրաստ են. տրվում է զանգը, բայց ոևմ համար, մարդ չը կայ, թատրոնը դատարկ է։ Դերասանները վարագոյրի ետևը, տխուր ժպիտը երեսներին՝ սպասում են, որ հասարակութիւն գայ։ Այստեղ թէ սիրողները և թէ եկովի դերասանները ներկայացում տալու ժամանակ՝ պարտաւոր են վաղօրօք մասնակցողների կամ ագենտների ձեռքով տոմսակները տեղիս ազնուամեծար աղաների տները կամ խանութները տանել և կարմրատակած երեսով մի կերպ կորզել տոմսակի գինը. իսկ աղան կը գայ թատրոն՝ ափսոսալով իր կօպէկները, թէ չի գայ՝ չը հաւանելով հայերէն ներկայացումները—այդ իր գործն է։ Մինչդեռ տիկ. Սիրանոյշը, փոխանակ այդպէս վարվելու, բաւականացել էր միայն ներկայացումից մի քանի օր առաջ աֆիշները ցրելով։ Հէնց դրա համար էլ, իբրև պատիժ, տոմսակները մնացել էին թատրոնի կասսայում։ Կարսեցուն չը պէտք է մի աչքով նայել։

Խեղճ տ. Սիրանոյշ. Կարսն էլ ուրիշ քաղաքների նման կարծելով՝ ամսիս 20-ին «Համլէտ» ներկայացնելու համար՝ աֆիշներ էր տպել տուել և մտադիր էր ներկայացման ժամանակ դահլիճի պատերից կախել, բայց տեսնելով, որ այս ներկայացման ժողովուրդ չը կայ՝ կարգադրեց չը կպցնել աֆիշները դահլիճի պատերին, որովհետև մի և նոյն է հասարակութիւնը չը պիտի գայ, իսկ խումբը ստիպված կը լինի ահագին զրկանքներ կրել։ Ամենախելացի բանն է Կարսից օր առաջ հեռանալը։

Վերջապէս ամբողջ մի ժամ սպասելուց յետոյ բարւոք է համարվում վարագոյրը բարձրացնել՝ փոխանակ ներկայացումը յետաձգելու կամ բոլորովին չը խաղալու։ Բայց աթոռները թափուր են, փոքր դահլիճի մի քառորդ մասը հազիւ բռնված է, այն էլ նոսր կերպով. իսկ եթէ զանազան հիմնարկութիւնների ներկայացուցիչները—ձրի տեղ բռնողների և օտարազգիների թիւը հանենք բոլոր ներկայ եղողների թուից՝ տեղը կը մնայ մի ողորմելի թիւ այն ողորմելի հասարակութիւնից, որի անունն է «Կարսի հայ հասարակութիւն»։ Խաղում են դերասանները, առանց եռանդները կորցնելու. ներկայ եղողներին կախարդել էր տիկինը իր հիանալի խաղով—Մագդայի դերում։ Այդ բանը տեսնելով և օտարազգիներից մի քանիսի իրաւացի կշտամբանքները լսելով երիտասարդներից մի քանիսը, գլխաւորապէս տեղիս սիրողները, վերջին խաղամիջոցին գնացին տիկնոջ ներկայացման՝ խնդրելով, որ խաղայ «Համլէտը», մանաւանդ որ աֆիշները պատրաստ են, իրանք էլ խոստանում են իրանց կողմից աջակցել տոմսակներ ցրելով, հասկացնելով, որ եթէ մարդաչափ գրերով անգամ աֆիշներ ցրեն Կարսում՝ դարձեալ պէտք է դերասանները տոմսակներ ուղարկեն ակնաւոր մարդկանց, այլապէս նրանք չեն գայ։ Տիկին Սիրանոյշ սկզբում մերժեց այդ ստորացուցիչ միջոցներով ժողովրդին թատրոն բերել, որի մէջ խմբի վարկը փոքրացած էր տեսնում, բայց վերջը զիջեց նրանց խնդրին և թոյլ տուեց աֆիշները կպցնել պատերից։ Չեմ իմանում, սրանից յետոյ էլ որ քիչ-շատ պատուազգաց դերասանը թոյլ կը տայ իրան Կարս գալ, հայերէն ներկայացում տալու համար։

Խաչ. Տէր-Ենոքեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Գուդաուտի, մայիսի 13-ին

Գուդաուտի սակաւաթիւ հայ երիտասարդութեան վերջապէս աջողվեց այս տարի գլուխ հանել իր վաղուցվայ ցանկութիւնը, այն է՝ կազմել սիրողների մի փոքրիկ խումբ և տալ հայերէն ներկայացում և այդպիսով տեղացի հայերին ծանօթացնել թատրոնի հետ։ Առաջին անգամ ներկայացում տուին փետրվարի 13-ին, Վարդանանց տօնի երեկոյեան։ Ներկայացումը աջող անցաւ, չը նայելով դերակատարների անփորձութեան։

Խրախուսված առաջին ներկայացման աջողութիւնից, մի երկրորդ ներկայացում էլ տուեց խումբը ապրիլի 13-ին։ Դարձեալ նոյն աջողութիւնը։ Բոլոր տոմսակները ծախվելուց յետոյ այլ ևս տեղ չը կար կանգնելու։ Մասնակցում էին՝ օր.օր. Ա. և Զ. Մազլումեանց և Ա. Եղիազարեան, պ.պ. Պ. Վահանեան, Մ. Յակովբեան, Փ. Եաղրչեան։ Ընդհանուր մուտքը եղաւ 98 ռուբլի։ Զուտ օգուտ մնաց 35 ռուբլի, որից 17 ռ. 50 կ. յատկացրվեց տեղական հիւանդանոցին, իսկ մնացած 17 ռ. 50 կոպէկ ուղարկելով «Մշակի» խմբագրութեան, խումբը խնդրում է յատկացնել հանգուցեալ ուսուցիչ Տէր-Դաւթեանի ընտանիքին 10 ռուբլի և 7 ռ. 50 կ. այն հիւանդ օրիորդին, որի մասին յայտարարված էր «Մշակում»։

Սիրող

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ խնդրում են տպագրել հետևեալը. «Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական ընկերութեան վարչութիւնը ստացաւ տիկին Կատարինէ Փոնդոյեանից 500 ռ. ի յիշատակ իր հանգուցեալ դուստր Նունէ Թամամշեանի, որի անունով պիտի թոշակ հիմնվի ընկերութեան հիմնարկութեան մէջ դաստիարակվող ամենաչքաւոր աղջկայ համար։ Վարչութիւնը յայտնում է իր խորին շնորհակալութիւնը տիկին Կ. Փոնդոյեանցին»։

—

Անդրկովկասեան երկաթուղիների վարչութիւնը Սուրամում հիմնում է սանատորիում խրօնիկական տենդ, թոքախտ և ոսկրացաւ հիւանդութիւններ ունեցողների համար։ Սանատորիումը կունենայ 200 մահճակալ։

—

Բիպինից, մի տիկնոջից, որ չէ ցանկանում յայտնել իր անունը, ստացանք 6 ռուբլի, որոնցից երեքը հիւանդ հայ ուսուցչի, իսկ մնացած երեքը չքաւորների օգտին։ Տիկինը խոստանում է ուղարկել չքաւորներին օգնելու նպատակով նուիրատուութիւններ և ապագայում։

—

Յուլիս ամսին Կովկաս այցելութեան կը գան 40 ուսուցիչներ և ուսուցչուհիներ Կուրսկի նահանգից և 18 ուսուցչուհիներ Կազանից։

—

Երեքշաբթի, մայիսի 20-ին, Մարիամեան—Յովհաննեան ուսումնարանում, Թիֆլիսի առաջնորդ Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանի նախագահութեամբ, տեղի ունեցաւ Վանքի, Մողնու և Բէթղէհէմի եկեղեցիների պատգամաւորների ժողովը՝ այդ ուսումնարանի համար հոգաբարձուներ ընտրելու համար։ Ձայների մեծամասնութեամբ ընտրվեցին՝ Ս. Անանեան, իշխան Ա. Բէհբուդեան, Ա. Երէցփոխեան և բժիշկ Կուկուջանեան։ Ընտրված անձինք պէտք է հաստատվեն Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի կողմից։

—

Թիֆլիսի նահանգական վարչութեան շինարարական բաժանմունքը, նահանգապետի յանձնարարութեամբ, ուղարկեց Թիֆլիսի քաղաքային վարչութեան Ֆ. Բագդասարի խնդիրքը, որով նա թոյլատրութիւն է խնդրում երկաթեայ կամուրջ շինելու քարեայ նեցուկներով Կուր գետի հանդիպակաց ափը։ Այս նախադիծը իրագործելու համար ձեռնարկողը մտադիր է մի ընկերութիւն կազմել մի քանի հողատէրերից և տնատէրերից՝ դուրս թողնելով 50 և 100 ռուբլի արժողութեան օբլիգացիաներ։ Կամուրջի վրայից անցնելու համար վճար պէտք է վերցնվի այն չափով և այն պայմաններով, որոնցով վճար վերցնվում է Վերայի կամուրջի վրայից անցնելու համար։ Վճարը կը վերցնվի այնքան ժամանակ, մինչև որ կամուրջի շինութեան համար արված ծախքը ստացվի, ապա կամուրջը կը յանձնվի քաղաքային վարչութեան, իբրև նրա սեփականութիւն։ Նահանգական վարչութիւնը ժամանակ է նշանակել ուղրավային՝ տալու այս հարցի մասին իր եզրակացութիւնը մինչև յունիսի 1-ը, իսկ եթէ մինչև այդ ժամանակ ուղրավան չը տայ իր եզրակացութիւնը՝ գործին ընթացք կը տրվի առանց ուղրավայի եզրակացութեան։

—

Թիֆլիսում, երկաթուղային ծառայողների շրջանում, միտք է ծագել հիմնել առանձին կլուբ այդ ծառայողների համար։ Արդէն ռանդումն կերպով ստորագրութիւններ են առնվում այն անձերից, որոնք համակրում են առանձին կլուբ հիմնելու գաղափարին։ Առաջիկայ յունիս ամսին տեղի կունենայ ընդհանուր ժողով կլուբի կանոնադրութիւնը մշակելու համար։

—

Ֆրանսիական «Matin» լրագրի ասելով, մօտ օրերում Քիշինեվ կը հասնի Դուբլինից «New-Iork Journal» լրագրի լիազօր, անգլիական պարլամէնտի նախկին անդամ, յայտնի Մայկէլ Դէվիտտ՝ բաժանելու Քիշինեվի անկարգութիւններից վնասված հրէայ ազգաբնակութեան այն խոշոր գումարը—մէկ միլիոն ֆրանկ,—որ ժողովված է Նիւ-Յորկում։

—

ՇՈՒՇՈՒՑ 13 ստորագրութեամբ հետևեալ հերքումն է մեզ ուղարկված. «Ցաւելով կարդացինք «Մշակի» № 81-ի ներքին լուրերի բաժնում Շուշուց հաղորդած այն լուրը, որ իբր թէ «օրվայ խօսակցութեան նիւթն է քաղաքային ընթերցարան-գրադարանից մեծ քանակութեամբ գրքերի կորուստը և այլն»։ Նախ որ մեր գրադարանապետը դեռ մի ամիս է ինչ պաշտօնի մէջ է. երկրորդ՝ նոյն իսկ «Մշակ»-ի թղթակցութիւններից յայտնի է, որ 10 հոգի, միայն 10 հոգի են օգտվում գրադարանից գրքեր վերցնելով, որ ի հարկէ չէր կարող մի գիրք կորչել մի ամսվայ ընթացքում»։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Երևանի քաղաքային լրացուցիչ ընտրութիւնները նշանակված են մայիսի 26-ին»։

—

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Հոգեկան հիւանդ մեր երաժիշտ պ. Մ. Եկմալեան այս օրերս բերվել էր Կարս, որտեղ, նրա եղբօր ասելով, մի ինչ որ մօլեկան այդ տեսակ հիւանդներին բժշկում է։ Սակայն չը գիտենք ինչու չուտով կրկին յետ տարան Երևան։ Պատմողներին նայելով, հիւանդի հետ շատ էլ մարդասիրաբար չեն վարվում. խնդրում ենք այդպէս չը վարվել դժբաղդ հիւանդի հետ, մինչ նա հասկանում է, թէ ինչ է անում»։

—

ՎԱՐՇԱՎԱՑԻՑ մեզ գրում են. «Լեհական «Prawda» շաբաթաթերթում պ. Բօդօսլավսկին բերում է մի շարք թարգմանութիւններ թիւրքահայ ժողովրդական երգերից։ Պէտք է ասած, որ լեհերէն թարգմանութիւնը արած է ֆրանսերէն թարգմանութիւնից, որը լոյս է տեսել «Mercure de France» լրագրում և որ կատարել է պ. Արշակ Զօբանեան. բայց, չը նայած այդ հանգամանքին, պարոնը բնագրին շատ մօտ է թարգմանել և գեղեցիկ լեզուով։ Մի փոքրիկ ակնարկ ձգելով հայոց պատմութեան վրա, պ. Բօդօսլավսկին գալիս է այն եզրակացութեան, որ «այդ փոքրիկ ազգը (այսինքն հայերը), ենթարկվելով մի կողմից պարսից աշխարհակալների, իսկ միւս կողմից բիւզանդական կայսրների, մակեդոնացիների, արաբների, հոսմայեցիների, մոնգոլների և ուրիշ բազմաթիւ ազգերի թէ աւերումներին և թէ կրօնական ու ազգայնական ճնշման, այնու ամենայնիւ, կարողացել է պահպանել մինչև օրս իր առանձնայատկութիւնները։ «Այդ իսկ տեսակէտից, շարունակում է հեղինակը, դա վերին աստիճանի հետաքրքրական և հերոսական մի ժողովուրդ է»։ Այնուհետև, նա բերում է թարգմանութեան կտորներ, սկսած օրօրի երգից մինչև հումօրիստական բանաստեղծութիւնները։ Ամենաշատ թարգմանութիւնները վերաբերվում են վերջին տարիների ազէտալի դէպքերին. քիւրդերի հարձակումները, մօր սուգը որդու դիակի վրա, գաղթականների երգը—այս բոլորի հետ առաջին անգամն է, որ ծանօթանում է լեհ ընթերցողը։ «Այս շապիկն է» երգը ամբողջովին թարգմանված է։ Վերջում պ. Բօդօսլավսկին շեշտում է այն հանգամանքը, որ երգերի աբխուր մօտիվը բացատրվում է այն տարաբախտ և անտանելի պայմաններով, որոնց մէջ ապրում են հայերը Թիւրքիայում։ Գարոնը ցանկութիւն է յայտնում, որ լոյս տեսնեն նաև ռուսահայ և պարսկահայ ժողովրդական երգերը աւելի ճիշտ թարգմանութիւններով»։

—

ՄՈՎՍԷՍ գիւղից (Ղազախի գաւառ) մեզ գրում են. «Այս տարի մեզանում սարահարթ տեղերի արտերը կորել են, գիւղացիք նորից հերկելով կորեկ կամ ուրիշ հացահատիկներ են ցանում։ Շնորհիւ յորդառատ անձրևների, թէ այգիները և թէ առհասարակ բուսականութիւնը առատ բերք են խոստանում։ Այժմ մեր գիւղացիք ազատ շունչ են քաշում, աւազակներ չը կան շնորհիւ գաւառապետ պ. Արնօլդի և պրիստաւ Տէր-Աստուածատուրեանի ջանք դրած միջոցների։ Մի բան, որ շատ անհանգստացնում է գիւղացիներին, անասունների մէջ երևացող հիւանդութիւնն է, որ քանի ամսից ի վեր պատում է մեր գաւառամասում»։

—

ԴԻԼԻՋԱՆԻՑ մեզ գրում են. «Աւելի լաւ կարգի տակ է դրված հասարակութեան բօտնդը. նմանապէս շինել են կանոնաւոր ճանապարհ դէպի անտառ բարձրանալու։ Այժմից իսկ երևում է, որ այս տարի ամարանոց եկողների թիւը աւելի շատ է լինելու մանաւանդ Բագուից, քանի որ արդէն մի քանի յայտնի ընտանիքներ արդէն իրանց համար նախօրօք վարձել են աչքի ընկնող ամարանոցները։ Իսկ ինչ վերաբերում է ճանապարհների երկիւղին կամ աւազակութեանը, այդ կողմից արդէն փաստ է, որ Ղազախի նոր գաւառապետ պ. Արնօլդի շնորհիւ կատարեալ հանգստութիւն և ապահովութիւն է տիրում։ Պ. Արնօլդի քաջագործութիւնների մասին շարունակ լրագիրներում գրում են. նա այնպէս է վարվում աւազակների հետ, որ ոչ ոք չէ վստահանում ուրիշի սեփականութեանը ձեռք տալ։ Ուստի երկիւղի կողմից կարող են բոլորը վստահ և ապահով լինել»։

—

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Մայիսի 18-ին, կիրակի, Նոր-Նախիջևանի քաղաքային թատրոնում պ. Ս. Բարխուդարեան տուեց մի կօնցերտ, որ նիւթական կողմից միջակ աջողութիւն ունեցաւ։ Երգչին լաւ ընդունեց մեր ժողովուրդը։ Պ. Բարխուդարեանը, որ իրան չը գիտենք ինչու Darian Barconi (Դարեան—Բարկոնի) է անուանում, մեծ, ու-

ժեղ և գեղեցիկ ձայն ունի, բայց այդ ձայնը անմշակ է։ Պարոնը դեռ զուրկ է գեղարուեստական ճաշակից և չը գիտէ երգել։ Տպաւորութիւն թողնելու համար պ. Բարխուդարեանը առանց կարիքի բարձրացնում է իր ձայնը, իսկ խորը ղգացմունք արտայայտելու համար նա դիմում է մի լալկան ձևի, կարծես երգում է մի բայաթի՝ մութ ամբոխի առաջ։ Հակացողների վրա պ. Բարխուդարեանի կենցերը վատ տպաւորութիւն թողեց։ Անկեղծ խորհուրդ ենք տալիս երիտասարդ և չնորհալի երգչին մշակել իր ձայնը։ Փոքր ինչ համեստութիւն և մեծ աշխատանք պէտք է նրան լաւ երգիչ լինելու համար»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼԻ ԲԱՆԿԷՏԸ ՊԱՐԻԶՈՒՄ

—

Պարիզում վերջերս տեղի ունեցաւ օտար մամուլի ընկերակցութեան տարեկան բանկէտը, որտեղ տիկին Սեվերինի և բարոն Դէտուրնէլ-Դը-Կոնստանի արտասանած ճառերը ընդհանուր ուշադրութիւն են գրաւել։

Տիկին Սեվերին վերջին երկու տարվայ ընթացքում Ֆրանսիայի առաջնակարգ հռետորների շարքն է անցել։ Նա խաղաղասիրական շարժման եռանդուն և գործունեայ առաքելուհիներից մէկն է և մանաւանդ պաշտպանուհի ճնշված և հարստահարված մանր ազգութիւններին։ Նրա նշանաւոր ճառերը ի նպաստ հայերի, մակեդոնացիների դեռ մոռացված չեն։ Այս անգամ նա խօսեց «Հայհոյանքի» մասին, առիթ բռնելով այն անպատկառ հայհոյանքները, յարձակումները, որոնց ենթարկվում են վերջերս Ֆրանսիական մամուլի մի որոշ մասի կողմից հանրապետութեան նախագահ Լուբէն, մինիստր-նախագահ Կոմբը, գեներալ Անդրէն։ «Լինել հայհոյված—բացականչեց տիկինը—այսօր հաւասար է տաղանդի և պատուի վկայական ստանալուն։ Ինքն ըստ ինքեան անպտուղ հայհոյանքը դառնում է պղտաբեր, հէնց որ շփվում է որոշ անձնաւորութեան հետ։ Հայհոյողներն ամենքը անհետացել են, պատմութիւնը մոռացել է նրանց, նրանց անունները ոչ ոքի յիշողութեան մէջ չեն մնացել, բայց նրանք, որոնց հայհոյել են, կը մնան—կը մնան և նրանք, որոնց հայհոյում են այսօր։ Երբ մարդ հրճվում է մի գեղեցիկ ծաղիկով, միթէ այդ ժամանակ մտածում են այն պարարտացուցիչ տարերքի մասին, որ աճեցրել է այդ ծաղիկը»։

Երկրորդ ճառախօսը՝ բարոն Դէտուրնէլ, յայտնի դիպլոմատ, նախկին դեսպան և խաղաղասիրական գործիչ, նա, որ նախագահեց նորերս ի նպաստ Մակեդոնիայի և Հայաստանի կազմակերպած միտինգին և մէկն է անգլո-Ֆրանսիական դաշնակցութեան պարագլուխներից, իր ճառը ուղղեց օտարազգի մամուլի ներկայացուցիչներին։ Դէտուրնէլի նշանակութիւնը պարլամենտում և Ֆրանսիայում աճեց մանաւանդ վերջերս, երբ նա իր աջակցութիւնը ցոյց տուեց յանուն խաղաղութեան և պրօգրէսի գաղափարի, արմատական մինիստրութեան, չը նայելով, որ ինքն չափաւոր է։ Դէտուրնէլ, անկասկած, վաղվայ արտաքին գործերի մինիստրներից մէկն է, ուստի և այդ պատճառով նրա խօսքերը մեծ նշանակութիւն ունեն։ Նա ասաց օտարազգի թղթակիցներին.

«Բնեցեք մեր գործողութիւնները, քննադատեցէք, մենք ձեզ չնորհակալ կը լինենք, որովհետև ձեր կրիտիկան մեզ օգուտ կը բերէ։ Ես չեմ հաւատում, որ ձեր մէջ լինեն իմ հայրենիքի թշնամիներ, բայց եթէ կան և այդպիսիները, որոնք սկզբում, գուցէ, հակատրամադրված են եղել մեր դէմ, այդ հակատրամադրութիւնները ժամանակի ընթացքում փարատվել են։ Այդ նախաբանից յետոյ ճառախօսը համեմատեց թղթակիցներին դիպլոմատների հետ և անցաւ իր ճառի բուն նպատակին, այն գործին, որ այժմ ամենից շատ մօտ է նրա սրտին, այն է խաղաղութեան, բայց խաղաղութեան ոչ թէ պրօպագանդային, այլ կազմակերպութեան։ Այդ գործի աջողութեան մեծապէս կարող են նպաստել մամուլի ներկայացուցիչները։

Կ. ՊՕԼԻՍԻ ԼՐԱԳԻՐՆԵՐԻՑ

—

—Ամուսնական գործերու մասին ռ. պատրիարքին պատրաստած և Կրօն. Ժողովոյ վերջին նիստին մէջ կարդացած մէկ գրաբար տեղեկագիրը, որուն հատառօտ յիշատակութիւնը ըրած էինք անցեալ օր, որքան լսեցինք, լաւ կերպով կը պատկերացնէ ամուսնական և ընտանեկան վիճակներ, որոնք կը ներկայացուին պատրիարքարան և որոնց մէկ մասը յառած եկած է կամքէ անկախ պատճառներէ։ Ինչպէս կը յիշուի, Մուշի տեղապահ տ. Խոսրով Ծ. վ. և Խարբերդի ու Վանայ տեղապահները ժամանակէ մը ի վեր այս կարգի խնդիրներ կը տեղեկագրեն, և մանաւորապէս քեալ կիներու վիճակը կը նկարագրեն և դարման կը պահանջեն։ Կենտրօնական մարմինը պէտք է միջոց մը խորհի, բան մը ընէ ասոր, և քանի որ ամուսնական վճռական կարգադրութիւններ պատրիարքարանի իրաւասութենէն բարձր են, հարկ է խնդիրը ներկայացնել հոգևոր վերին մարմնոյն։ Անհաւասիկ այս նկատումով ս. պատրիարքը պատրաստած է այդ գիրը, որ գնահատուեր է Կրօն. Ժողովոյ անդամներուն կողմէ ալ, իբրև լաւ գրուած և իբրև հաւատարիմ պատկեր մը կարգ մը ընտանեկան խեղճութիւններու։ Սակայն մի և նոյն ատեն Կրօն. Ժողովոյ հայրերը դիտել տուեր են որ, այս կերպ դիմումի մը համար պէտք է կամ Կրօն. Ժողովէն բարձր գտնուող օրինական եկեղեցական ժողովոյ կարծիքը առնել կամ ձեռնհաս եպիսկոպոսներուն, քանի որ այդ մասին օրինական արամադրութիւն ալ կայ, և Կրօն. Ժողովը որ շատ անգամ սակաւաթիւ անդամներով կը գումարէ իր նիստերը (ինչպէս այս վերջին նիստն ալ), ինչպէս կարելի է որ այս կարգի ընդհանուր խնդիր մը նկատողութեան առնէ։ Ուրեմն Կրօն. Ժողովոյ առարկութիւնը սկզբունքին դէմ չէ այլ ձևին, ու կուզէ աւելի օրինական և կանոնական ձև մը տալ գործին և ս. պատրիարքն ալ համամիտ է ասոր. հետևաբար պիտի աշխատուի լրացնել այս ձևակերպութիւնը։ Թէ ինչ պիտի ըլլայ այս մասին հայրապետական կարգադրութիւնը՝ չենք գիտեր. սակայն կարծողներ և հաւատացողներ կան թէ այս խմատով գիր մը երթալէն մէկ երկու շաբաթ վերջ՝ բաց հրամանագիր մը պիտի գայ արտօնող որ բոլոր քեալ կիներուն մէկ մէկ ամուսին տրուի, ընտանեկան դժբաղդութիւնը մը ունեցողներէն անոնք որ իրենց այրերէն դժգոհ են մէկ մէկ էրիկ առնեն և եթէ իրենց կիներու երեսէն դժուարութեան մէջ են մէկ մէկ կին տրուի իրենց, և այս հրամանագրին վրա այլ ևս ընտանեկան ձախողուածները պիտի հեռանան և ընտանեկան երջանկութիւնը իր բուն նշանակութիւնը պիտի առնայ։ Այս առթիւ խել մը այրերու ու կիներու ալ պէտք պիտի ըլլայ հարկաւ, անոնց համար ալ բան մը պիտի խորհուի ընականաբար։ Ուրիշներու համար այդ կարծիքը ճիշդ չէ սակայն, որովհետև երբ Մուշի նախորդ տեղապահը քանի մը տարի առաջ յայտարարութիւն մը հանեց, որ մինչև երեք ամիս իրենց ընտանեկան յարկը չը վերադարձող ամուսիններու կիները ամուսնացնելու պիտի հարկադրուի, այն ատեն Ս. Կաթողիկոսը ինքնաբերաբար նամակ մը գրեց պատրիարքարան, պատուիրելով որ զգուշացուի աճապարանօք գործելէ և այս կարգի ընտանեկան ընդհանուր կարգադրութիւններէ։ Ն. Օծութենէն եկած այս հրամանին ու պատուէրին առջև է որ Կրօն. Ժողովը կուզէ ուրիշ եկեղեցականներու և եպիսկոպոսներու կարծիքը առանալ, և խնդիրը աւելի մանրամասն և ուսումնասիրուած ձևով ներկայացնել ս. Հայրապետին։

—Մալազկերտի երկրաշարժը. Կարմրէն կը հաղորդեն թէ ապրիլ 16-ին, չորեքշաբթիէն հինգշաբթի գիշեր, ժամը 7 ու կէսին, Էրզրումի մէջ՝ մէկ, Նարմանի մէջ՝ ինը, և Խնուսի մէջ երեք անգամ երկրաշարժի թեթև ցնցումներ զգացուեր են, առանց վնաս պատճառելու։ Նոյն գիշերը, Թուխաք գաւառակին (Էրզրում) Պաթնոս գիւղախումբին մէջ բուռն ցնցում մը զգացուեր է՝ որ 1/3 համեմատութեամբ վնասներ պատճառած է թէ կեանքի և թէ շէնքերու, որուն վրայ նահանգին վսեմ. կուսակալը հրաման ըրած է պէտք եղած օգնութիւնները հասցնելու։ Բայց միևնոյն գիշերը ամէնէն աւելի վնասուողը եղեր է Մալազկերտ գիւղաքաղաքը, որ Թուխաք գաւառակին սահմանակից և Պիթլիսի կուսակալութեան ներքև կիյնայ։ Այդ գիւղաքաղաքը, ինչպէս նաև շրջակայ գիւղերը, ցնցումներուն հետևանօք, աւերակ դարձեր և բնակիչներուն մեծագոյն մասը զոհ գացեր են։ Իսկոյն նահանգին կուսակալութիւնը հրաման ըրեր է հաց, պիտոյքներ և գործաւորներ հասցնելու արկածին վայրը։ Բազմաթիւ ընտանիքներ փլատակներու տակ մնացեր և մեռեր են, շատեր ալ մերկ ու անպատապար վիճակի մէջ կը մնան։ Ցնցումը մանաւանդ խիստ եղեր է բուն իսկ Մալազկերտի մէջ, իսկ շրջակաները՝ նուազ։ Վնասուեր են նաև Պուլանդի, Ախլաթի և այլն գաւառակներու կեդրոնները և գիւղերը, որոնք Մալազկերտի մօտ կը գտնուին։ Մեծ վնասներ կրեր է նաև Մալազկերտի հետ Թուխաքի գաւառակին Պաթնոս գիւղախումբը, ուրտեղի մզկիթը, նախնական դպրոցները, և Հիւսէյին փաշային երկու տուները անվնաս մնացեր են թէև, բայց գիւղախումբին մնացորդ մասերը, Խաճիլի, Մոլլա Իպրահիմ, Զամիքօ, Մոլլա Մուստաֆա կոչուած գիւղերը հողին հետ հարթ հաւասար դարձեր են, 430 տուն իսլամ և 150 տուն հայ երկսեռ բնակիչներ զոհ գացեր են։ 17 գիւղ մասամբ աւերակ դարձեր են, իսկ մնացորդ մասին մէջ՝ 110 հոգի մեռեր են։ Սիփքի գիւղախմբին հինգ գիւղերը բոլորովին, իսկ ութը գիւղ մասամբ աւերակ դարձեր. 8-ը հոգի մեռեր են, ինչպէս նաև անասուններու մեծ մասը։ Սանճագ գիւղին մէջ՝ 6 մարդիկ մեռեր են. ուրիշ 16 գիւղ ալ աւերակ դարձեր են։ Արջառները և միւս կենդանիները, եղանակին բերմամբ՝ սխոռներու մէջ ըլլալով, շատ կորուստներ տեղի ունեցեր են։

—Բաղէշէն ալ ապրիլ 16 թուով կը գրեն թէ՝ Մալազկերտի, Ախլաթի, և շրջակայ գիւղերուն երկրաշարժէ հիմնայատակ կործանումը ահ ու սարսափ պատճառեր է Բաղէշ քաղաքին բնակչութեան։ Անձի կորուստը՝ 2000-ի մօտ կենթադրուի։ Բաղէշի տեղական իշխանութիւնները արկածեալներուն ի նպաստ հանդանակութիւն մը բացեր են, որուն մը մասակցին Բաղէշցիները։ Ասոնք ալ վախցած՝ իրենց տուներէն դուրս ելնելով՝ իրարներու տակ կապատանին։

—Ախլաթէն Պատրիարքարան քաշուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Մալազկերտի մէջ պատահած երկրաշարժի բուռն ցնցումներէն Մատնավանքը չափազանց վնասուեր է։ Այս մասին Մուշի պատր. փոխանորդին տալիք մանրամասնութեանց կը սպասուի։

—Մուշի առաջ. տեղապահ Տ. Խոսրով Վ. հեռագրած է Պատրիարքարան թէ Մալազկերտի մէջ պատահած երկրաշարժէն շատ մը հայ տուներ վնասուեր և մարդիկ ու բազմաթիւ անասուններ փլատակներու տակ մնացեր են։

«Սուրհանդակ»

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Կ. Պոլսից հաղորդում են, որ Սալոնիկի դէպքի առիթով բանտարկված բոլգարների թիւը հետզհետէ աճում է և այժմ հասնում է 5—8000 հոգու։

—Մայիսի 13/26-ին, Զօլայի վերջնական թաղումը տեղի ունեցաւ։ Դագաղը հանեցին ժամանակաւոր գերեզմանից և դրին ընտանեկան դամբարանի մէջ, որ չինել է տիկին Զօլայի յանձնարարութեամբ ճարտարապետ Ժուրդէնը։

—Նորվեգիական հռչակաւոր գրող Բբերնսոն մի գերմանական լրագրի մէջ հետևեալ կարծիքն է յայտնում ի նպաստ գերմանական ծագումն ունեցող բոլոր ազգերի դաշնակցութեան։ Նա գտնում է, որ համաշերմանական դաշնակցութիւնը (այսինքն դաշնակցութիւն Գերմանիայի, Աւստրիայի, Անգլիայի, Ամերիկայի, Շվէյցարիայի և Հոլանդիայի մէջ) այն օգուտն ունի, որ փոքր երկիրները կը հրաժարվեն արտաքին քաղաքականութիւնից և կը նուազեցնեն իրանց զօրքի և պատերազմական ծախքերի քանակութիւնը։ Այդ դաշնակցութիւնը կապահովէ փոքր երկիրների անկախութիւնը։

—Կոպենհագենից հեռագրում են «Berlin. Tageb.» լրագրին, որ Հենրիկ Իբսէնի առողջութեան վիճակը ամենալուրջ երկիւղ է պատճառում։ Բժիշկները և բարեկամները կորցրել են յոյսը։ Իբսէնը մինչև վերջին ժամանակը պահել է իր հանճարի ամբողջ ոյժը։

—Ինչպէս յայտնի է, Ֆրանսիայում ներկայումս յուզվում է պետութեան և եկեղեցու բաժանման խնդիրը։ Յայտնի գործիչ Պրէսանսէ առաջարկեց պարլամենտին ջնջել կոնկորդատը Վատիկանի հետ։ Նա այն կարծիքի է, որ այնպիսի մի ազատ երկրի մէջ, ինչպիսին Ֆրանսիան է, պէտք է եկեղեցին ազատ լինի։ Թող ամեն մի քաղաքացի իր կրօնը պաշտէ, բայց թող ազատ մտածողներին էլ չը ստիպեն պահպանել եկեղեցին դրամով։ Միւս կողմից յայտնի քաղաքական գործիչ Պօլ Կասանեակ, իբրև պատասխան այն անձանց, որոնք կասեցել էին եկեղեցում արգելել քարոզ խօսելը, գրում է. «Եթէ դուք ցանկանում էք եկեղեցու բաժանումը պետութիւնից, ինչու դուք ինքներդ առաջինը չէք պահում այդ, ինչ գործ ունէք մեր եկեղեցիներում, ուր ոչ մի բան ձեզ չէ քաշում և չէ կանչում։ Դուք կամենում էք «բաժանվեր». շատ գեղեցիկ, ուրեմն բաժանվեցէք ինքներդ, դուրս եկէք եկեղեցուց և թողէք մեզ նրա մէջ։ Դուք զզվում էք մեր քարոզներից։ Ինչի համար ուրեմն գալիս էք լսելու այդ քարոզները։ Միաբանութեան անդամները ձեզ դուր չեն գալիս. ինչու էք մօտենում նրանց։ Թողէք ամեն մարդու իր տանը լինելու։ Մենք չենք գալիս ձեզ մօտ, որովհետև դուք մեզ զզուանք էք յայտնում։ Եթէ դուք համարձակվէք գալ մեզ մօտ, մենք ձեզ կը սպանենք»։ Այս բանակռիւը ցոյց է տալիս, թէ Պրէսանսէի առաջարկը որքան յուզել է կրքերը։

—«Berliner Tageblatt» լրագիրը մի քննութիւն է բացել իմանալու համար, թէ որոնք են ամենանշանաւոր կանայքը։ Ահա քննութեան հետևանքը—բարօնուհի Բէրթա Սիւտնէր ասացել է 156 ձայն, Կարմէն Սիլվա 142 ձայն. Սառա Բերնար 139 ձայն. Իլէօնար Դիւզէ, 132 ձայն և Մարիա ֆօն Էբներ-Էշենբախ 71 ձայն,

—«Баку» լրագրում կարդում ենք. «Ամէրիկայից հեռագրում են «Frankfurter Zeitung» լրագրին, որ մեր դեսպան կոմս Կասինի հաւաստիացրեց Միացեալ-Նահանգների կառավարութեանը այն բանում, որ ռուսաց կառավարութիւնը միջոցներ ձեռք առաւ Քիշինեվի ջարդի նման դէպքերի առաջն առնելու համար։ Բանն այն է, որ Միացեալ-Նահանգների շատ քաղաքներում տեղի ունեցան ժողովներ, որոնք պահանջում էին ամերիկական կառավարութեան միջամտութիւնը։ Դեռ 1895 թ-ին, ռուսահպատակ հրէաների ասատիկ դաղթելու ժամանակ դէպի Միացեալ-Նահանգները, ամերիկական դեսպանը յայտնեց Պետերբուրգում, թէ ցանկալի չէ հեղեղել Միացեալ-Նահանգները աղքատ հրէաներով։ Նիւ-Յորկում հրէական միտինգում նախագահում էր ինքն քաղաքագլուխը։ Ռասիկանութիւնը պաշտպանում է ռուսաց դեսպանութիւնը։

—Սոֆիայի ռուսաց հիւպատոսի ամուսինը այցելեց այս օրերս այն հիւանդանոցը, ուր պառկած են մակեդոնական անցքերին մասնակցողները։ Տիկին Բախմետէվան, վիրաւորվածներին մի քանի մխիթարական խօսքեր ուղղելուց յետոյ, մօտեցաւ գնդապետ Ենակովին, որը ասեց նրան. «Տիկին, ձեր դիպլոմատիան արիւն է պահանջում Մակեդոնիայի ազատութեան համար. մենք ուրախութեամբ կը թափենք մեր արիւնը, մինչև որ մեր հայրենիքը կազատվի թիւրքական լուծից»։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

21 մայիսի

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՎՍԿ։ Դումայի վճռեց բանալ խոհարարութեան և անտարարութեան գործնական դպրոց։ Հաւանութիւն է տուած քաղաքային հասարակական գրադարանի կանոնադրութեան նախագիծը։

ՐԻԳԱ։ Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչ ճանապարհ ընկաւ Լիբաւա։

Կ. ՊՕԼԻՍ։ Հիմնվելով գլխաւոր տեսչի հաղորդած տեղեկութիւնների վրա, Բ. Դուռը գրաւոր հաղորդեց ռուսաց և աւստրիական դեսպաններին բոլգարական այն ուսուցիչների անունները, որոնք, համաձայն ապացոյցների, պատկանում են յեղափոխական կոմիտէներին։ Բ. Դուռը առաջարկեց էկզարխին պաշտօններ չը տալ այդպիսի տարրերին։

ԿԱՆԷՑԱ։ Ժամանեց ռուսաց զօրաբաժինը փոխ-գնդապետ Պասսօվէրի հրամանատարութեամբ՝ փոխարինելու ռուսաց գրաւող զօրքերին։

ԼԻԲԱՎԱ։ Ժամանեց Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչ։

Կ. ՊՕԼԻՍ։ Բ. Դրան յայտարարութեան համեմատ, Սալոնիկում արձակված են մօտ 400 կալանաւորված բոլգարներ. մնացած 26 հոգին, որոնց յանցանքը ապացուցված է, դեռ ևս բանտի մէջն են գտնվում։

ԲԷՆԻՈՒՆԻՍ։ Շատ արաբներ պատրաստվում են սրբազան պատերազմ հրատարակել Ֆրանսիացիների դէմ։

ԲԵՐԼԻՆ։ Գերմանական հրէաներին օգնող ընկերութեան հաւաքած նուիրատուութիւնների գումարը Քիշինէվի հրէաների համար հասաւ 345,000 մարկի։

ՆԻՒ-ԵՕՐԿ։ Կանգաս նահանգում հեղեղի պատճառած վնասը գնահատվում է 15—25 միլիոն դոլլար։ Եօվա նահանգում 600 քառ. մղոն դաշտեր ջրի տակն են գտնվում։

Կ. ՊՕԼԻՍ։ Պարտքերի միացման նախագիծը վերջնականապէս հաստատվեց սուլթանի իրադէով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մայիսի 21-ին կայացաւ Գատչինեան որբերի ինստիտուտի հարիւրամեակի տօնախմբութիւնը, ներկայութեամբ Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆէոդորօվնայի, Մեծ Իշխան Թագաժառանգի և Մեծ Իշխանուհի Օլգա Ալէքսանդրօվնայի։

22 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ «Օրէնքների» Ժողովածուի» մէջ տպված է. ժամանակաւորապէս արգելել հրէաների անունից և ի նպաստ նրանց ամեն տեսակ կալուածագրեր կատարել այն նահանգներում, որոնք չեն մտնում հրէական մշտակայ բնակութեան սահմանում և փոխել 1882 թ-ի ժամանակաւոր կանոնները հրէաների բնակութեան մասին քաղաքներից և աւաններից դուրս։

ՎԼԱԴԻՎՈՍՏՈԿ։ Զինուորական մինիստրը մանրամասն քննեց բոլոր ամրութիւնները Վլադիվոստոկում. դուրս բերված տպաւորութիւնը կատարելապէս նպաստաւոր է։—Կայացաւ հանդիսաւոր ակտ և արեւելեան ինստիտուտը առաջին աւարտողներին արձակեցր։ Նրանք բոլորը 10 հոգի են։ Աստիճանները բաժանում էր ինքն մինիստրը։

ՊԻԱՏԻԳՈՐՍԿ։ Էսսէնտուկում օրհնվեց և բացվեց Վլադիկավկազի պօստ-հեռագրական շրջանի բժշկվող պաշտօնեաների ընկերութիւնը։

ՊԵՏԵՐՀՈՖ։ Պետերբուրգի յօբելեանական հանդէսները վերջացան անագին մանկական տօնախմբութեամբ Պետերհոֆում. մայիսի 19-ին, 20-ին և 21-ին Պետերբուրգի քաղաքային դպրոցների սաները, աւելի քան 6000 հոգի ամեն օր, շոգենաւերով գալիս էին Պետերհոֆ և գնում էին երաժշտութեամբ դէպի Պետրոս Մեծի արձանը, իսկ յետոյ գնում էին կադէտների կորպուսը, ուր նրանց հիւրասիրում էին թէյով և նախաճաշով։

Կ. ՊՕԼԻՍ։ «Ի կդամ» լրագիրը նուիրում է նպաստաւոր յօդուած բօլշարական կաբինէտին, որը կամենում է ամրապնդել լաւ յարաբերութիւնները։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մայիսի 19-ին ուլանները մատուցին իրանց նախկին հրամանատար պրինց Նապոլէօնին բաղխայ հին ռուսական սովորով։ Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորօվնա բաժանեց իր ուլաններին, հրամանատարին և օֆիցէրներին արծաթէ մեդալներ իր պատկերով։

ԵՕԿՕՀԱՄԱ։ Պէրերի ժողովն ընդունեց կառավարութեան առաջարկած բոլոր ֆինանսական միջոցները։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՏԱՄՆԵՐԻ ԲԺԻՇԿ

Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆ

Արտասահման գնալու պատճառով, կատարելագործվելու ատամնաբուժութեան մէջ, հիւանդների ընդունելութիւնը ժամանակաւորապէս դադարեցնում է։ 3—4

ՇԱԳԻՆ-ԳԱՐԱՀԻՍԱՐՅԻ Մ. ԱԴԱՄԻ ՈՐԴԻ

ԳԱԼՈՒՍՏ ՎԱՐԴԱՆՕՎ

արհեստը սափրիչ է, երեսը քիչ ծաղկոտ, Եալթայէն ելը եօթը տարի է. հասակը 30 տարեկան է. ի սէր ազգութեան, ով որ գիտէ, թող հաղորդէ Եալտա, Աւետիս Յարութիւնեանին.
Кофейня Аветиса Арутюняна, 3—10

Մ. ԽԱՐԱԽԱՆԵԱՆՑ
ԱԳՐՕՆՕՄ

Մասնագէտ գիւղատնտեսական զանազան ճիւղերի, ուսած Ֆրանսիայի Մօնպէլիէ քաղաքում. ևս առաւել կատարելագործած այգեգործական և գինեգործական մասնաճիւղերը, պաշտօն է խնդրում մասնաւոր կալուածներում։ Դիմել «Մշակի» խմբագրութեան։
3—5

ԲԺԻՇԿ Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, մորթու և վեներական ախտ ունեցող հիւանդներին։ Քիմիկո-միկրոսկոպիական կաբինէտ, որտեղ ընդունվում են կաթի, խորխի, մէզի և արեան անալիզներ։
Առաւօտեան 11—1 ժ.
Երեկոյեան 4—6 ժ.
Բերութեանական փողոց № 41. տուն Արարատեանի։ Бебутовская ул. № 41. Домъ Араратова. 91—150

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԳԱՐԿԱՎԱՅԱՆ

ԳԱՐՄԻՑ ԾՈՅԻ
ԶԻԹՈՒՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԲՈՒՇԻՐՈՒՄ

(Հիմնված 25 տարուց ի վեր)

Հաղորդում է մանրամասն տեղեկութիւններ Գարմից ծոցի առեւտուրի մասին, ունի ներկայացուցիչներ հարաւային Գարսկաստանի նշանաւոր կենտրոններում, ընդունում է յանձնարարութիւններ, գնում եւ վաճառում է ապրանքներ, փոխադրում է Եւրոպայից Գարսկաստան եւ Գարսկաստանից Եւրոպա, դիւրամատչելի պայմաններով.—Հասցէն. Zeytoon B. G. Buchier Persian-Bulf. 94—100

ԵԻՊԱՏՈՐԻԱՑԻ ծխական դպրոցի համար

ՀԱՐԿԱՒՈՐ Է Մ Ի ՈՒՍՈՒՑԻՉ

չրջանաւարտ Ներսիսեան դպրոցի, 400 բուբլի տոմիկ և սենեակ։ Ցանկացողները թող բարեհաճէն դիմել հետեւեալ հասցէով։
Евпаторія, ктитору П. Я. Сеферову.
1—25 Պօղոս Սէֆէրեան

ՀՐԱՒԷՐ

Մայիսի 25-ին, կիրակի, ս. պատարագից յետոյ, ժամը 12-ին, Վանքի մայր եկեղեցում ժողով է լինելու ընդունելու հողոր կոչման մէջ Թիֆլիսի քաղաքացի Սարգիս Իսահակեան Ալիխանեանցին նոյն եկեղեցում ոպասաւորութեան համար, ուստի մեծ. պ.պ. ծխականները հրաւիրվում են յիշեալ եկեղեցին՝ ժողովին մասնակցելու համար։
Գործակալ՝ Գր. քահ. Մանդակունի
1—2

ՄԻ ՖՐԱՆՍԻԱՑԻ,

որ լաւ գիտէ ռուսերէն՝ տալիս է ֆրանսերէն, գերմաներէն և անգլիերէն լեզուների դասեր, շատ ձեռնտու պայմաններով։ Հասցէն՝ Միխայլովսկի պրոսպէկտ, տ. Մակկէրի, № 130, բնակ. 5։ (եւ հ. շ. կ.) 3—4

ԱՏԱՄԻ ՈՒ ԲԵՐԱՆԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԲԺԻՇԿ

ԱԼ. ՄԱԹՈՒՐԵԱՆ
ՇՈՒՇՈՒՄ

սկսում է հիւանդների ընդունելութիւնը մայիսի 10-ից։ 6—12

ԲԺՇԿԱՊԵՏ

ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻՆ

նախկին տարիների նման, մայիսի 15-ից ընդունում է հիւանդներին Կովկասեան հանքային ջրերում։
Հասցէն. Пятигорскъ, Верхній Бульваръ, д. Султанъ-Гирея. 6—10

ПОСОБІЕ ДЛЯ ТОРГОВЦЕВЪ

Законы, ограждающіе интересы торговцевъ противъ неисправныхъ должниковъ. О штрафахъ и наказаніяхъ. Уставы: Гербовый и вексельный. Формы векселей и прошеній. 1903 г. Ц. 20 к., съ пересылкой 25 к. Обращаться ко всѣмъ книгопродавцамъ или къ издателю: въ Александрополь, Д. Попандопуло.
Книгопродавцамъ уступка 30%. 4—5

ԳՈՒՏՏԷՆԲԵՐԳ

Գրախանութում վաճառվում են բժ. Ա. ԲՈՒԴՈՒՂԵԱՆԻ աշխատութիւններից հետեւեալները.
1. Վեներական ախտեր 5 կ.
2. Մեր նեարդերը 10 կ.
3. Առողջ հոգին առողջ մարմնի մէջ 10 կ.
4. Գեղձախտ (զօլոտուխա) 10 կ.
5. Ո՞վ է յանցաւորը 15 կ.
6. Կարիք և բարեգործութիւն 15 կ.
7. Ժառանգականութիւն և դաստիարակութիւն 15 կ.
8. Մանկավարժական համառօտ զրոյցներ 15 կ.
9. Մարմնամարզութիւն (25 պատկերներով) 20 կ.
10. Առողջապահական նուէր նորատի կանանց 20 կ.
11. Ինչ է կաշու հիւանդութիւնը 15 կ.
12. Երիտասարդութիւն և ծերութիւն 15 կ.
13. Առողջ և հիւանդ երեխայի ոգին 20 կ.
14. Մարմնամարզութիւն պատկերներով 10 կ.
15. Ուղեղի սիֆիլիսը (գլխի և ողնաշարի) 20 կ.
16. Ստամոքսի կատարը 20 կ.
17. Քուն և երազ 25 կ.
(Մեծադիր պատկերը «Քուն և երազ» չքեղ թղթի վրա 10 կ.
ՊԱՏՐԱՍՏ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ.
1. Իրաւունք և կռիւ։
2. Սնոտիապաշտութիւն։
3. Բնութեան ոյժը, ինչպէս բժիշկ։
4. Նուէր հայ գինուորին (պատկերազարդ)։
Այս 4 գրքոյկներից զոյացած զուտ արդիւնքը կուղարկվի Գարսկաստանում բացվելիք «Նալբանդեան-Պատկանեան գիւղատնտեսարհեստագիտական դպրոցին։
Դիմել՝ Книжный магазинъ „Гуттенбергъ", (Дворцовая) Галустяну. 2—8



ՊԻԼԻԼՆԵՐ
CASCARA MIDY
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄԻՋՈՑ

ՍՈՎՈՐԱԿԱՆ ՓՈՐԿԱՊՈՒԹԵԱՆ ԴԷՄ

Զափը—2 պիլիւլ երեկոյեան, պառկելուց առաջ։
CASCARA MIDY (Կասկարա Միդի) չէ առաջացնում ստամոքսի մէջ ցաւեր, սրտի խառնում, կամ փորլուծութիւն։
Դեղատուն Midy, 113, faubourg, St-Honoré, Պարիզ, Ռուսաստանի գլխաւոր դեղատներում։ (28 մ. 5, 12, 19, 26, յ. 3, 17, 30 յլ. 14, 28 օ. 11, 25 ս. 9, 23 հ.

● ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԼԱԲՕՐԱՏՕՐԻԱ ●

Գ. ՓԱՍՏԵՐՄԱՋԵԱՆԻ

Դօկտոր քիմիական գիտութիւնների

Ընդունում է ամեն տեսակ նիւթերի և հանքերի անալիզներ (որակական և քանակական)։
Հանքերի մանրամասն ուսումնասիրութիւններ և հետախուզութիւններ։
Դիմել հետեւեալ հասցէին. Докторъ Г. Пастермаджіанъ. Вельяминовская ул., 19. ТИФЛИСЪ. 7—10

ՀԱՅ ԾՆՈՂՆԵՐՈՒՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳԻՇԵՐՕԹԻԿ ԴՊՐՈՑ

ԼՕԶԱՆ, ՇՎԻՑԵՐԻԱ

Երկրորդ տարի

(16-րդ անգամին սկսեալ. ձմեռուան վեցամսեայ դասերը կը սկսին սեպտ. 1/14-ին)

Արեւելեան կամ հայկական դպրոցը կընդունի 10-էն 20 տարեկան աշակերտներ, որոնց կուտայ, ծնողներու բաղձանքին համեմատ, գիտական, գրական, առեւտրական կամ արդիւնաբերական առողջ ու հիմնաւոր կրթութիւն՝ ներդաշնակօրէն և սերտ կերպով միացած ազգային հիմնական դաստիարակութեան հետ։ Մեր հայ սաներուն կաւանդենք, և այս՝ առանց սակայն մատնաւոր վճարումի, հայոց լեզու (ռուսահայ և տաճկահայ բարբառ), մասնագրութիւն հայոց (հին և նոր), հայոց պատմութիւն և այլն։ Ռուսահայ աշակերտները կարող են նաև ուսանել ռուսաց լեզուն։

Դպրոցիս տարեթուակը, հակառակ իր ընծայած բազմաթիւ իրական առաւելութիւններուն, անօրինակ կերպով չափաւոր է։—Ընտանեկան կեանք։—Դպրոցիս յայտագիրը ամեն ուղղի կը ղրկուի։

Տնօրէն՝ Մ. Նալբանդեան, դօկտ. գիտութեանց՝ պրիվատ-դոցենտ
1) Longeraie, Lausanne, Suisse 21—27

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ՆԱԳԼԷԹԳԱ"

Ծովային, գետային եւ ցամաքային ապահովագրութեան, ապրանքների տեղափոխութեան եւ դրամերը կրակից ապահովագրելու համար։

ՀԻՄՆՎԱԾ Է 1847 ԹՎԻՆ

Հիմնական գրամագլուխը . . . . . 1,650,000 բուբլի
Պահեստի դրամագլուխը . . . . . 2,664,808 »

Ի. ԱԳՐՕՆՈՄՆԵՐԻ ՑԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ.

Աւելի քան 800 գործակալութիւններ եւրոպական Ռուսաստանի, Կովկասի, Միջին Ասիայի, Սիբիրի եւ հեռաւոր Արեւելքի բոլոր նշանաւոր տեղերում, նոյնպէս եւ ներկայացուցիչներ արտասահմանի գլխաւոր քաղաքներում։

Տեղափոխութիւն ամեն տեսակ բեռների եւ իրերի, որոնց ընդունելութիւնը եւ յանձնումը կատարվում է թէ տանը եւ թէ պահեստներում ու խանութներում։

Յանձնուած բեռների ուղարկվողների կողմից առաջարկված պայմաններով (վերադիր չճարներ ի հաշիւ ուղարկողների, դրամի փոխադրութիւն (переводъ) բեռները յանձնելու տեղը հասցնելու համար եւ այլն)։

Ապահովութիւն բեռների արտաքին պայմաններով ստացման տեղերում՝ ապահովագրելով նրանց պահեստներում, որի համար շատ կէսերում կան ընդարձակ պահեստներ, յատկապէս բեռներ պահելու համար։

Ի. ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

Սեփական մարդատար, ապրանքատար եւ ձգող շոգենաւեր, ծովային եւ գետային նաւեր (70 նաւ.)։

Բեռնափիր եւ մարդատար նաւերի զարբերական հաղորդակցութիւն Վոլգա գետի բոլոր նաւահանգիստների մէջ, Ռիբինսկից մինչեւ Աստրախան, եւ Կասպից ծովի բոլոր նաւահանգիստների մէջ, Աստրախանից մինչեւ Պարսկաստանի ափերը։

Ամենաընդարձակ պահեստներ Նիժնիում (սիբիրեան նաւամատոյցի վրա), Աստրախանում, Բաքւում եւ Կրասնովոդսկում։

Բեռները անընդհատաբար ուղարկելու համար ընկերութեան շոգենաւագնացութիւնը համաձայնութիւն է կապել երկաթուղիների հետ։ Այն ապրանքների տեղափոխութեան համար, որոնք ուղարկվում են Ռուսաստանից Պարսկաստան եւ Պարսկաստանից Ռուսաստան, գոյութիւն ունի առանձին, բացառիկ արտօնութիւնով, հատուցմանութիւն Պարսկական ապահովագրական եւ տեղափոխութեան ընկերութեան հետ։

Ա. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ.

ա) Ապահովագրութիւն բեռների, որոնք տեղափոխվում են թէ ցամաքային և թէ ջրային հանապարհներով (ծովերով և գետերով)։
բ) Ապահովագրութիւն կրակից ամեն տեսակ գոյքերի։
գ) Ապահովագրութիւն ամեն տեսակ դժբաղդ դէպքերից հանապարհին ամեն տեսակ նաւերի, շոգենաւերի, առագաստանաւերի, վագոնների և վագոն-ցիստերնների։
դ) Ապահովագրութիւն թանգագին իրերի և արժէքաւոր լուքերի, որոնք ուղարկվում են պօստով, ցամաքային և ծովային հանապարհներով, համաշխարհային պօստային գաշնակցութեան բոլոր կէտերի մէջ։
Ապահովագրութիւններ ընդունվում են ինչպէս վարչութեան, այնպէս էլ ամեն տեղ ընկերութեան բոլոր գործակալութիւնների մէջ։
Բացի տեղափոխութեամբ զբաղվող գործակալութիւններից, կրակից ապահովագրելու գործերով մասնաւորապէս զբաղվում են էլի ուրիշ 350 գործակալութիւններ։
Ս. Պետերբուրգի «Նաւթեժգոտ» ընկերութեան վարչութիւնը գտնվում է Ս. Պետերբուրգում, Ադմիրալտեյսկի, պրոսպէկտի վրա, № 10-բրդ տունը։
Լիազօրներ—ծովային շոգենաւագնացութեան համար՝ Բաքւում, գետային շոգենաւագնացութեան համար՝ Նիժնի-Նովգորոդում։
Թիֆլիսի գործակալութիւնը—Դվորցովայա փողոցի վրա, վրաց ազնուականների տունը։ Տելեֆոն № 108 (ե. տ. ֆ.) 81—120

Дозволено Цензурою. Тифлисъ, 22 Мая 1903 г.
Электропечатня Груз. Изд. Т—ва, В. Ванская ул.